

19. Կինոարտադրություն

Հանրապետության «Հայֆիլմ» և «Հայկ» պետական կինոստուդիաներում 1997-2002թթ. թողարկված 26 ֆիլմերից 2002թ. ավարտվել է 21 ֆիլմերի արտադրությունը: «Հայֆիլմ» կինոստուդիայում շարունակվում է 5 անավարտ ֆիլմերի արտադրությունը, որոնց ավարտը նախատեսված է 2003 և 2004 թվականներին:

Ավարտված ֆիլմերի ընդհանուր արտադրական ծախսերը կազմել են 400.8 մլն. դրամ, որից 17.3 մլն. դրամն այլ արտադրանքի և ծառայությունների ծախսերն են: Ընդհանուր արտադրական ծախսերի 53.7%-ը կան 215.1 մլն. դրամի ծախսերն իրականացվել են 2002թ. (17.3 մլն. դրամ՝ այլ արտադրանք և ծառայություններ):

ՀՀ պետական կինոստուդիաների գործունեությունը, 2002թ.

Ավարտված ֆիլմերն ըստ տեսակների		Ֆիլմերի քանակը	Թողարկումը	Արտադրական ծախսերը, մլն. դրամ	
				ընդամենը	որից՝ 2002թ.
«Հայկ» կինոստուդիա					
Լիամետրաժ	Սուրբ Լեռան հովտում	1	2000	24.6	6.9
Կարճամետրաժ կինոֆիլմեր	«Կինոհանդես» թիվ 1 և 2	2	2002	5.1	5.1
	«Կինոհանդես» թիվ 3	1	2002	3.6	3.6
Կարճամետրաժ տեսաֆիլմեր	Վարոսի քաղաքը	1	1998	4.7	1.0
	Գուրգեն Մելիքյան	1	2001	2.4	2.2
	Գոհար Գասպարյան	1	2001	3.1	3.1
	Դեքիաթ թևավոր ձիու մասին	1	2001	2.8	2.7
	Իմ Հայաստանը	1	2001	1.5	1.3
	Հովնաթան	1	2002	1.7	1.7
	Ժան-Սեն	1	2002	2.4	2.4
Ընդամենը		11		51.9	30.0
«Հայֆիլմ» կինոստուդիա					
Լիամետրաժ	«Վավերագրողը»	1	1997	161.8	33.0
Անիմացիոն	«Սասունցի Դավիթ»	2	2001	95.0	60.0
	«Կանխագուշակում»	1	2002	25.0	25.0
Տեսաֆիլմեր	«Ֆիլմ ֆիլմի մասին»	1	2002	2.3	2.3
	«Հայաստան-Սփյուռք»	1	2002	24.0	24.0
	«Ներիր մեզ, Աստված»	1	2002	1.0	1.0
	«Երևան-Բյուզ»	1	2002	12.0	12.0
	«Զգրված օրենք»	1	2002	6.0	6.0
	«Հերոստրատ»	1	2001	4.5	4.5
Ընդամենը		10		331.6	167.8

2002թ. «Հայֆիլմ» և «Հայկ» կինոստուդիաների ֆինանսական միջոցների մուտքը կազմել է 422.2 մլն. դրամ, որի 93.2%-ը կան 393.4 մլն. դրամը՝ ՀՀ պետական բյուջեից, 0.3%-ը կան 1.4 մլն. դրամ՝ վարձակալությունից, 6.5%-ը կան 27.4 մլն. դրամ՝ այլ եկամուտներից:

Կինոստուդիաների ֆինանսական ընդհանուր ծախսերը կազմել են 420.6 մլն. դրամ: Աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կազմել են ընդհանուր ծախսերի 40.2%-ը (169.2 մլն. դրամ), ոչ նյութական ծառայությունների վճարումները՝ 29.5%-ը (124.2 մլն. դրամ), նյութական ծախսերը՝ 11.0%-ը (46.1 մլն. դրամ), պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները՝ 8.6%-ը (36.1 մլն. դրամ), գործուղման ծախսերը՝ 5.3%-ը (22.1 մլն. դրամ), հիմնավերանորոգման, սարքավորումների և գույքի ձեռք բերման ծախսերը՝ 5.1%-ը (21.5 մլն. դրամ), այլ ծախսերը՝ 0,3%-ը (1.4 մլն. դրամ): ֆինանսական միջոցների մնացորդը տարեվերջին կազմել է 6.1 մլն. դրամ: